ՎԵԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N *ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԱՇՁԲ-20/18*

ք. ՎԵԴԻ «17» օգոստոսի 2020 թ.

«Վեդու համայնքապետարանը», ի դեմսհամայնքապետ Վ.Բարսեղյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ և «ԴԻՆԱՄԻԿ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիումը, ի դեմս ընդհանուր գործերը վարող Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ-ի, որը գործում է սեփական նախաձեռնությամբ և համատեղ գործունեության պայմանագրի ու լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Թումանյան 3, 3/1, 3/2, 3/3, Պուշկին 1, Կասյան 26/9, 26/10, 26/11, 26/12, 26/13 բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 50 **օրացույցային օր** Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 20 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ

էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և որպես

...ներին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի ...կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է ...ադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած ...ացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3)մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 21.360.000 (քսանմեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, որից 3.560.000 (երեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, այն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից*

սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով

գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

---

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ*

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վեդու համայնքապետարան Ք.Վեդի Թումանյան 6 ՀՀ Ֆինանսների նախարարություն Հ/Հ 900 422 102 229 ՀՎՀՀ 04100912 Համայնքի ղեկավար Կ.Բարսեղյան ---------- /ստորագրություն/ Կ.Տ	Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ և «ԴԻՆԱՄԻԿ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում (ընդհանուր գործերը վարող Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ) Հասցե՝ ք.Երևան Բագրատունյաց փ., 11շ., 27 բն. Բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ h/h 1150019122582595 ՀՎՀՀ 01500362 ---------- /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Ծավալաթերթ - նախահաշիվ

«ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Թումանյան 3,3/1,3/2,3/3, Պուշկին 1, Կասյան 26/9,26/10,26/11,26/12,26/13 բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներ»

Туманяна 3, 3/1, 3/2, 3/3, Пушкина 1, Касьяна 26/9, 26/10, 26/11, 26/12, 26/16 многоквартирных дворов общины Веди Араратской области РА

NN	Հիմնավորումը Обоснованые	Աշխատանքների անվանումը Наименование работ	Չափման միավորը е/и	Ծավալը объем	Միավորի ընդհանուր արժեքը Цена единицы	Ընդհանուր արժեքը Всего
					հազ. դրամ тыс. Драм	հազ. դրամ тыс. Драм
1	2	3	4	5	6	7
		Շինարարական աշխատանքներ Строительные работы				
		Քանդման աշխատանքներ Разборочные работы				
1	Е27-36	Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/ Разборка бетонных бордюров (на бетонной основе)	գմ м	70,50	1,09	76,80
2	Р9-26 կիր.	Մետաղական ցանկապատերի ապամոնտաժում Демонтаж металлического забора	գմ м	85,80	0,59	50,33
3	Е27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով Разборка асфальтобетонного покрытия с слоями	մ^3 м3	113,03	4,57	516,87
4	Р19-4 կիր.	Պողպատե Φ110մմ խողովակների ապամոնտաժում Разборка стальных труб Φ110	գմ м	7	1,35	9,47
5	Е46-99	Բետոնե հիմքերի քանդում Разборка бетонных фундаментов	մ^3 м3	1,64	19,02	31,20
6	Е48-253 կիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից Очистка территории от пней и нерегулярно выращенных кустов	հատ шт	33	0,07	2,37
7	Р23-247 Р23-223 Р23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /910մ2/ Уборка территории, вывоз мусора, транспортировка и погрузка на самосвалы 910 кв.	տ тн	1,56	1,45	2,26
8	С310-3 տ.մ.կ. 29	Նույնի տեղափոխում 3կմ перевозка мусора 3км	տ тн	1,56	2,23	3,47
		Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում				

9	E27-36	/բետոնե հիմքով/ Разборка базальтовых бордюров на бетонной основе	զմ м	102,50	1,09	111,66
10	C310-2 տ.մ.կ 29	Նստարանի ապամոնտաժում разборка скамей	հատ шт	1	1,86	1,86
11	C310-1 տ.մ.կ 29	Պտտվող կառուսելի ապամոնտաժում разборка вращающейся каруселя	հատ шт	1	7,60	7,60
12	C310-1 տ.մ.կ 29	Մետաղական զրուցարանի ապամոնտաժում разборка металлического беседки	հատ шт	1	7,60	7,60
13	C310-1 տ.մ.կ 29	Ճոճանակի ապամոնտաժում разборка качелей	հատ шт	1	7,60	7,60
14	P9-122 K=0.6 K=0.7	Ֆուտբոլի մետաղական դարպասների ապամոնտաժում Разборка металлических футбольных ворот	տ тн	0,38	43,50	16,53
15	E1-1612	Բնահողի կտրում մեխանիզմով բարեկարգման աշխատանքների համար разборка грунта с механизмом для благоустройства	մ^3 м3	91	0,10	8,71
16	C310-3 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 3կմ Погрузка строй. мусора, излишной почвы, на самосвалы и и транспортировка до 3 км	տ тн	342,47	2,24	766,64
		Ընդամենը **Итого**				**1620,97**
		Տոկոսը ամբողջի համեմատ **Процент по сравнению с целым**				**7,59%**
		<u>Կառուցողական աշխատանքներ</u> **<u>Строительные работы</u>**			0,00	0,00
		<u>Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով</u> **<u>Установка бетонных бордюров размером 300x150 мм</u>**			0,00	0,00
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня толщиной 10 см	մ^3 м3	5,84	12,29	71,80
2	E27-78	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի Установка бетонных бордюров размером 300x150 мм	զմ м	233,5	7,42	1733,03
		Ընդամենը			0,00	1804,83

		Итого			0,00	1664,03
		Տոկոսը ամբողջի համեմատ **Процент по сравнению с целым**			0,00	**8,45%**
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով **Установка бетонных бордюров размером 200x80 мм**			0,00	0,00
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня толщиной 5 см	մ^3 м3	2,12	12,29	26,06
2	E27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի Установка бетонных бордюров размером 200x80 мм	գմ м	281,70	4,92	1385,98
		Ընդամենը **Итого**			0,00	**1412,04**
		Տոկոսը ամբողջի համեմատ **Процент по сравнению с целым**			0,00	**6,61%**
		Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում **Монтаж бетонных плит / брусчатка /**			0,00	0,00
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ Подготовительный слой из базальтового щебня толщиной 5 см	մ^3 м3	14,4	12,28	176,62
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր g/ա շաղախով Сглаживающий слой под бетонными плитами цементно-песчаным раствором толщиной 4 см	մ^3 м3	8,14	20,67	168,28
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով 6սմ հաստությամբ Плитка с бетонными плитами толщиной 6 см	մ^2 м2	204	6,67	1356,90
		Ընդամենը **Итого**			0,00	**1701,80**
		Տոկոսը ամբողջի համեմատ **Процент по сравнению с целым**			0,00	**7,96%**
		Ֆուտբոլի դաշտի կառուցում **Строительство футбольного поля**			0,00	0,00
1	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=10սմ Подготовительный слой из базальтового щебня толщиной 10 см	մ^2 м2	402,50	1,32	530,01
		Մանրահատիկ ասֆալտբետոնե				

2	E27-169	ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ Исполнение асфальтобетонного покрытия толщиной 3 см	մ^2 м2	402,50	3,93	1580,40
3	Գնահաշվարկ N13 Расчет цены N13	Բասկետբոլի օղակով ֆուտբոլի դարպասների տեղադրում Установка футбольных ворот с баскетбольным кольцом	հատ шт	2,00	201,25	402,51
4	Գնահաշվարկ N12 Расчет цены N12	Մետաղական ցանկապատի իրականացում подготовка металлического забора	գմ м	44	9,90	435,60
5	E15-614	Մետաղական ցանկապատի երկտակ յուղաներկում Двухслойная масляная краска металлического забора	մ^2 м2	268,6	1,36	366,55
6	E8-189	Գույքային փայտամածի տեղադրում եւ ապամոնտաժում արտաքին աշխատանքների համար Монтаж и демонтаж строительных лесов для наружных работ	մ^2 м2	233,00	0,71	164,56
		Ընդամենը Итого			0,00	**3479,64**
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым			0,00	**16,29%**
		Այլ աշխատանքներ **другие работы**			0,00	0,00
1	Գնահաշվարկ N1 Расчет цены N1	Մետաղական ճաղաշարի իրականացում монтаж металлических стержней	գմ м	181,0	11,38	2060,56
2	Գնահաշվարկ N3 Расчет цены N3	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում подготовка и установка металлических мусорных баков	հատ шт	12	14,25	170,94
3	Գնահաշվարկ N2 Расчет цены N2	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում изготовление и установка скамей	հատ шт	13	26,32	342,21
4	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի՝ գլաքարի շերտի իրականացում, 10սմ հաստ. Исполнение слоя из голубого песка / извести / толщиной 10 см на игровых площадках	մ^3 м3	44,70	3,26	145,55
5	Գնահաշվարկ N5 Расчет цены N5	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում Новое детское игровое оборудование, подготовка и установка 4-местной вращающейся карусели	հատ шт	1	280,67	280,67
	Գնահաշվ	Նոր մանկական խաղասարք «Հորիզոնական ճոճանակ»-ի ձեռք բերում				

6	արկ N6 Расчет цены N6	/պատրաստում/ և տեղադրում Новое детское игровое оборудование, изготовление и установка горизонтальных качелей	հատ шт	2	93,58	187,15
7	Գնահաշվ արկ N4 Расчет цены N4	Նոր մանկական խաղասարք «սղարան»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում новое детское игровое оборудование, изготовление и установка скользящая игри	հատ шт	1	169,30	169,30
8	Գնահաշվ արկ N7 Расчет цены N7	Նոր մետաղական զրուցարանի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում 2x3մ չափերով, սեղանով, նստարաններով Подготовка и установка нового металлического беседки размером 2x3 м, стол и скамейки	հատ шт	3	492,08	1476,23
9	Գնահաշվ արկ N7-1 Расчет цены N7-1	Հին մետաղական զրուցարանի վերատեղադրում 2x3մ չափերով установка старого металлического беседки размером 2x3 м, стол и скамейки	հատ шт	1	96,38	96,38
10	Գնահաշվ արկ N4-1 Расчет цены N4-1	Հին մանկական խաղասարք «ճոճանակ»-ի վերատեղադրում установка старого качелей	հատ шт	1	33,27	33,27
11	Գնահաշվ արկ N5-1 Расчет цены N5-1	Հին մանկական խաղասարք «պտտվող կարուսել»-ի վերատեղադրում установка старогоа вращающейся карусели	հատ шт	1	93,23	93,23
12	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով Обработка почвы с помощью экскаватора, погрузка самосвалов	մ^3 м3	42,40	0,55	23,35
13	C310 տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ Перевозка почвы 50 км	տ тн	63,60	7,75	492,59
14	E48-168 E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 100մմ հաստությամբ Растительность выкладывают вручную в зеленую зону толщиной 100 мм.	մ^2 м2	424,0	2,09	888,24
15	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար Подготовка к посеву семян	մ^2 м2	424,0	0,22	91,36
16	E48-214	Սերմի ցանում 1մ^2 - 35գր Посев семян 1м2 - 35г	մ^2 м2	424,0	0,34	142,12
		Ընդամենը **Итого**			0,00	**6693,16**
		Տոկոսը ամբողջի համեմատ **Процент по сравнению с целым**			0,00	**31,34%**

		Էլեկտրատեխնիկական մաս **Электрическая часть**			0,00	0,00
1	Е1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով Разработка грунта /траншеи/в ручную	մ^3 м3	85,50	4,79	409,41
2	8-142-1	Անկողնակի պատրաստում Подготовка подушки	գմ м	190,00	0,29	54,59
3	Е23-1	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 2.4+2.4մ^3 //3.3+3.3մ3/ Осуществление подготовительных и защитных слоев из песка 10см толщиной, 2.4+2.4м3//3.3+3.3м3/	մ^3 м3	11,40	5,09	58,00
4	8-417-7	Խողովակ վինիպլաստե Ի50մմ винипластовая труба Ф50мм	գմ м	190,00	0,81	154,66
5	Е8-145-1	АВВГ 2х10մմ^2 հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/ АВВГ Кабель алюминиевый с сечением 2х10мм2 /надземный/	գմ м	190,00	0,49	93,25
6	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով Защитная / предостерегающая / ленточная установка шириной 300 мм	գմ м	190,00	0,78	147,84
7	Е1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով Обратная засыпка грунта, с трамбовкой	մ^3 м3	73,60	1,38	101,32
8	С310-3 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 3կմ Погрузка строй. мусора на самосвалы и и транспортировка до 3 км	տ тн	29,40	2,25	66,17
9	Գնահաշվարկ N9	Լուսավորության հենասյուների տեղադրում Н=6.1մ Установка опорных столбов освещениям Н=6.1м	հատ шт	9	186,23	1676,08
10	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /համանման գոյություն ունեցողին/ LED լամպով 30վտ, 4500K Установка недостающих стеклянных плафонов с LED лампой 30вт, 4500K	հատ шт	3	18,38	55,13
		Ընդամենը **Итого**			0,00	**2816,45**
		Տոկոսը ամբողջի համեմատ **Процент по сравнению с целым**			0,00	**13,18%**
		Ոռոգում **Орошение**			0,00	0,00

		Տեխնոլոգիական աշխատանքներ **Технологические работы**			0,00	0,00
1	E22-397	Միացում գործող ջրագծին Подключение к существующей линии воды	տեղ мсето	2	3,75	7,49
2	E22-65	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Φ57x3.0մմ, հիդրավլիկ փորձարկումով Монтаж трубопровода из электросварных металлических труб Φ57x3.5мм, с	գմ м	263	2,92	768,20
3	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Φ48x3.0մմ, հիդրավլիկ փորձարկումով Монтаж трубопровода из электросварных металлических труб Φ48x3.0мм, с	գմ м	33,00	2,47	81,38
4	E22-368	Թուջե կցաշուրթավոր սողնակների տեղադրում 30ч 6бр Ի50մմ Ру1.0ՄՊա Установка чугунных клапанов 30ч 6бр Ի50мм Ру1.0МПа	հատ шт	4	19,46	77,86
5	E22-429	Պողպատե կցաշուրթերի եռակցում Ի50 Сварка стальных фланцев Ի50	հատ шт	12	3,78	45,39
6	Գնահաշվարկ N10 Расчет цены N10	Ջրթող հանգույցների մոնտաժում Установка поливочных узлов	կ-տ к-т	26	11,35	295,06
7	շուկա	Ջրցան ցնցուղ Дождеватель	հատ шт	26	7,01	182,39
8	Գնահաշվարկ N11 Расчет цены N11	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում Монтаж сливного узла трубопровода	կ-տ к-т	4	9,24	36,97
9	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի մոնտաժում Установка стальных фасонных частей	տ тн	0,026	2882,59	74,95
10	շուկա рынок	Հեղյուս M16, L=60մմ Болт M16, L=60мм	կգ кг	7,056	1,56	10,98
11	շուկա рынок	Պնդօղակ M16 Гайка M16	կգ кг	2,006	1,64	3,29
12	E15-614	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ Окраска стальных труб 2 слоя	մ^2 м2	57,60	1,36	78,61
13	E22-335	Պողպատե խողովակների լվացում Φ48մմ Промивание стальных труб Φ48мм	գմ м	33,0	0,04	1,19
14	E22-335	Պողպատե խողովակների լվացում Φ57մմ Промивание стальных труб Φ57мм	գմ м	263,0	0,04	9,45

		Ընդամենը Итого			0,00	1673,19
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым			0,00	7,84%
		Շինարարական աշխատանքներ Строительные работы			0,00	0,00
1	Е1-961	III կարգի գրունտի մշակում ձեռքով /խրամուղում/ Ручная обработка грунта III класса /в траншее/	$մ^3$ м3	36,400	2,72	98,91
2	Е1-969	Գրունտի ետլիցք ձեռքով Обратная засыпка грунта вручную	$մ^3$ м3	31,600	1,38	43,50
3	Е1-1184	Գրունտի տոփանում Трамбовка грунта	$մ^3$ м3	9,100	0,28	2,50
4	С310-3 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի տեղափոխում մինչև 3կմ Погрузка строй. мусора на самосвалы и и транспортировка до 3 км	տ тн	9,98	1,30	13,00
		Ընդամենը Итого				157,92
		Տոկոսը ամբողջի համեմատ Процент по сравнению с целым				0,74%
		Ընդամենը Итого				21360,00

Հավելված թիվ 1
« 17» օգոստոսի 2020 թ. կնքված
ՀՀ ԱՄՎՔ- ԳՀԱՇՁԲ-20/18 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Վեդի համայնքի Թումանյան 3, 3/1, 3/2, 3/3, Պուշկին 1, Կասյան 26/9, 26/10, 26/11, 26/12, 26/13 բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Ծավալաթերթը կցվում է

* Կապալառուն աշխատանքները կատարում է ք Վեդի Թումանյան3 Պուշկին 1 Կասյան 26 հասցեներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229
ՀՎՀՀ 04100912
Համայնքի ղեկավար Վ.Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ և «ԴԻՆԱՄԻԿ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում (ընդհանուր գործերը վարող Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ)
Հասցե՝ ք.Երևան Բագրատունյաց փ., 11շ., 27 բն.
Բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
հ/հ 1150019122582595
ՀՎՀՀ 01500362

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 17» օգոստոսի 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Վեդի համայնքի Թումանյան 3, 3/1, 3/2, 3/3, Պուշկին 1, Կասյան 26/9, 26/10, 26/11, 26/12, 26/13 բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	ՇԻՆ ՄՈՆՏԱԺԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համաձայն ագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	10 **օրացույցայ ին օր**
2	ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համաձայն ագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20 **օրացույցայ ին օր**
3	ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համաձայն ագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	20 **օրացույցայ ին օր**
4	ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՔՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	Համաձայն ագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	50 **օրացույցայ ին օր**
5	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾԱՄԱՆ ՀԱՆՁՆՈՒՄ	Համաձայն ագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	50 **օրացույցայ ին օր**
...	Վեդի համայնքի Թումանյան 3, 3/1, 3/2, 3/3, Պուշկին 1, Կասյան 26/9, 26/10, 26/11, 26/12, 26/13 բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգման **ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	Համաձայն ագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	50 **օրացույցայ ին օր**
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ և «ԴԻՆԱՄԻԿ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում (ընդհանուր գործերը վարող Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ)
Հասցե՝ ք.Երևան Բագրատունյաց փ., 11շ., 27 բն.

/ստորագրություն/
Կ.Տ

/ստորագրություն/
Կ.Տ

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> այունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231270	Հանգստի տարածքների վերանորոգման աշխատանքներ	...%	...%	...%	...%	...%	...%	...%	%	..%	...%	...%	...%	21.360.000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վեդու համայնքապետարան
Ք.Վեդի Թումանյան 6
ՀՀ Ֆինանսների նախարարություն
Հ/Հ 900 422 102 229
ՀՎՀՀ 04100912

Համայնքի ղեկավար Վ.Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ և «ԴԻՆԱՄԻԿ ԿՈՆՍՏՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում (ընդհանուր գործերը վարող Սուրեն Զարգարյան Տիգրանի Ա/Ձ)
Հասցե՝ ք.Երևան Բագրատունյաց փ., 11շ., 27 բն.
Բանկ՝ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
հ/հ 1150019122582595
ՀՎՀՀ 01500362

/ստորագրություն/
Կ.Տ